

ՄՆՆԴԱՌՈՒԹԻՒՆ ԵՒ ԿԵՐԱԿՈՒՐ

ԲՃՇ. ՆԵՐՍԷՍ ՈՒՄԻԿԵԱՆԻ

Ասիտենա առողջապահութեան ամբիոնի Խարկովի համալսարանում.

(Շարունակութիւն ¹)

IV

Խօսելով՝ գիտնականապէս որոշած կերակրային տարրերի հինգ կարգերի մասին — ես գիտմամբ խօսք չ'ասացի — ֆոսֆոր պարունակող օրգանական մի նիւթի մասին որ լեցիտին է կոչուում:

Լեցիտինը նման է ճարպերին, որոնց նա շատ մօտ է իւր բաղադրութեամբ, եթերի և սպիրտի մէջ լուծուելովը և այլն: Լեցիտինը մեծ քանակութեամբ գտնուում է գլխի ուղեղի մէջ և փոքր քանակութիւններով բոլոր օրգաններում ²): Ես հետազօտել եմ թէ առաջինների և թէ երկրորդների քանակութիւնը գիտնական ճշուութեամբ: Ես հետազօտել եմ նմանապէս լեցիտինի քանակութիւնը շատ բուսական կերակրային միջոցներում՝ լոբու զանազան տեսակներում, սխեռի, զարու, ցորենի, եգիպտացորենի, գեանախնձորի և ուրիշ շատ նիւթերի մէջ:

¹) Տես «Մուրճ» № 6.

²) Կերակրային զանազան միջոցների մէջ գտնուող լեցիտինի քանակութեան և լեցիտինի սննդատու նշանակութեան մասին իմ կատարած հետազօտութիւնները և կրթակացութիւնները շուտով լուս կը տեսնեն մի որ և է բժշկական թերթում.

Գիտնական գրականութեան մէջ մինչև օրս չկայ և ոչ մի աշխատասիրութիւն, որը ցոյց տւած լինէր լեցիտիւնի սննդատու նշանակութիւնը: Պրոֆ. Կանելեվսկու հսկողութեան ներքոյ իմ արած բազմաթիւ փորձերից՝ շների, աղանիների և իմ անձիս վրա երեւաց որ լեցիտին ընդունող կենդանիների կշիռը աւելի շուտ էր ծանրանում, նրանք աւելի զւարթ, ուժեղ, արագաշարժ էին լինում և ընդհակառակն՝ լեցիտինից զրկւած կենդանիները կորցնում էին իրանց կշիռից, (և եթէ մի քանիսի քաշը աւելանում էր — դա լինում էր շատ աննշան չափով), դառնում էին դանդաղ, վատառողջ և այլն:

Այս իմ փորձերից պարզ ապացուցւում է լեցիտինի սննդատու լինելու նշանակութիւնը: Կենդանիները ընդունում են բացի վերոյձիշեալ բոլոր սննդատու նիւթերից մեծ քանակութեամբ նաև ալիսպիտին նիւթեր, որոնք մեծ մասամբ գտնւում են կերակուրի մէջ աննշան չափերով և որոնք դարձնում են ընդունելի կերակուրը աւելի համով և ուտելի: Այս նոր տեսակի նիւթերը սննդատու նշանակութիւն բոլորովին չունին, որովհետև նրանք չեն կարողանում սահալանել մեր օրգանիսմի նիւթական պարունակութիւնը և ոչ էլ ապահովել օրգանիսմի մէջ եղած սննդատու նիւթերը կորուստից: Այս տեսակի նիւթերը կոչւում են ճաշակի նիւթեր:

Սոքա կատարում են մի բոլորովին ուրիշ, բայց ոչ պակաս նշանաւոր դեր օրգանիսմի համար և կերակուրի մէջ սոքա նմանապէս անհրաժեշտ են, նման սննդատու նիւթերին:

Ճաշակի բոլոր նիւթերը կարելի է բաժանել երկու մեծ կարգերի:

1) Նոքա՝ որոնք ընդունւում են բացառապէս կերակուրի հետ միասին (կամ կերակուր պատրաստելու ժամանակը, կամ ուտելու ժամանակը, կամ ուտելու միջոցին) և անւանւում են համեմունք (правильные), զորօրինակ հասարակ աղը, մանանիս, քացախ, պղպեղ, իւղ, կինամոն (դարչին), վանիլ, մշկահոտ ընկոյզ, բոլոր բանջարեղէնները՝ զազար, կաղամբ, կոտեմ, թարխուն, բողի, ծներեկ և այլն, որ զցում են կերակուրի մէջ:

2) Նոքա, որոնք ընդունւում են առանձնապէս իրր կերակուր կամ ըմպելիք միմիայն համեմունքին և զրգուղ տեսակետից և ոչ թէ սննդատու լինելով: Այս թւում են տեսակ-տեսակ զակուսկաներ,

քաղցրաւենի, միրգ, խմիչքեղէն, սուրճ, թէյ, շոկոլատ, կոնֆէկտներ և այլն:

Հիմնւելով իմ բոլոր ասածներիս վրա 5 տեսակ սննդատու նիւթերի վերաբերութեամբ՝ կարելի էր կարծել, որ եթէ մենք վերցնելու լինենք սպիտակուցային նիւթեր, ճարպեր, ածխաջրածիններ, անօրգանական աղեր և ջուր — որոշ և կենդանու համար անհրաժեշտ քանակութեամբ, և, եթէ այդ բոլորը միասին խառնելով մի խառնուրդ կազմէինք ու առաջարկէինք իբր կերակուր կենդանուն՝ նաև նորմալ կերպով կը կերակուրէր դորանով:— Բայց ոչ: Այ մարդս, ոչ անասունները կերակուրի այդպիսի մի խառնուրդ չեն ուտիլ, որովհետև այդպիսի մի խառնուրդը անհամ է լինում: Նոքա հրաժարուով են այդպիսի մի կերակուրից նոյն իսկ մեռնելով քաղցից: Բայց եթէ աւելացնում ենք ճաշակային նիւթեր կամ համեմներ՝ նոքա սկսում են ընդունել այդպիսի նոր խառնուրդը թէև ոչ երկար ժամանակով:

Այսպիսով՝ ոչ մարդը, ոչ կենդանիները չեն կարող կառավարել առանց ճաշակային նիւթերի. և այս վերջիններիս անհրաժեշտութիւնը այնքան զգալի ու մեծ է, որ մարդս շատ անգամ չանձն է առնում ամեն ծախք անել, նոյն իսկ զրկել սննդատու նիւթերից, միայն թէ կարողանայ գոհացում տալ իւր ճաշակային պահանջներին: Այս հանգամանքով են բացատրւում այն ահագին ծախքերը որ անում են՝ զինու, արաղի, զարեջրի, տեսակ-տեսակ զսկուսկաների, ծխախոտի, կոնֆէկտների և այլ ճաշակային նիւթերի վրա: Ի՞նչ է պատճառը ճաշակային այս մեծ պահանջքի, որ ունի կենդանին:

Գիտնականների բազմաթիւ փորձերով ապացուցւել է, որ ճաշակային նիւթերը ազդում են սննդաուլթեան և մարսողութեան վրա իրանց ներգործութեամբը ջղային սխտեմի վրա:

Համով և հոտով կերակուրի նիւթերը սկզբում գրգռում են ճաշակային և հոտաուլթեան օրգանները, զրդում են մի ախորժակի զգացողութիւն, այնուհետև ներգործում են ամբողջ մարսողական գործիքի վրա — պատրաստելով նրան մարսողութեան գործի համար: Գրգռման գործողութեան ժամանակ — արտադրւում է առատ լորձունք: Այդ կարելի է ապացուցանել փորձով ստամոքսային գեղձերի

(Железа) համար ¹⁾։ Ամեն մի կերակուր այնքան է ուտուում—մինչև որ նա համով է թւում։ Այն ամենը ինչ որ անհամ է կամ վատ համ ունի—մենք չենք կարող կուլ տալ։

Բերանից անցնենք ստամոքսին։ Յայտնի է որ յուզաթաղանթի ամեն մի մեքանիկական գրգռումը ստամոքսի մէջ—առաջ է բերում խախտաշոյղի արտաթորութիւն և արիւնատար անօթներէ լնումն (наполнение)։ բայց մի քանի գրգռող ճաշակային նիւթեր աւելի զօրեղ են այդ կողմից, զորօրինակ խոհանոցի աղը և ալկոհոլը (АЛКОГОЛЬ)։ Այս պատճառով է որ ուտելուց առաջ ընդունում են կամ շատ աղի կամ խիտ համեմած զակուսկա, ձկնկիթ, կամ մի ումպ արաղ։ Երկրորդ կարգի ճաշակային նիւթերը երբ որ սոքա արդէն անցած են լինում արիւնի մէջ՝ ազդում են գլխաւորապէս գլխի և ողնաշարի ուղեղների վրա։ Սոցա թւում են՝ սուրճ, թամբաքու, թէյ, ոգեղէն և այլն։ Գլխի և ողնաշարի ուղեղները այս նիւթերի ներգործութեան տակ տարածում են իրանց գրգռող ոյժը ամբողջ օրգանիսմի վրա—ազդելով մեր տրամադրութեան վրա և մեր՝ աշխատելու ընդունակութեան վրա։ Մտաւոր կամ ֆիզիկական գործով աշխատող մշակը հեռու է մղում առաջ եկող թմրութիւնը թամբաքու քաշելով կամ մի բաժակ գինի խմելով։

Սակայն չը պէտք է մոռանալ որ այս ճաշակային նիւթերը իրանք-իրանք սննդատու նիւթ չեն մատակարարում, այլ միմիայն զարկ են տալիս եղած սննդատու նիւթերի աւերման, քայքայման. և եթէ օրգանիսմին շարունակ տալու լինենք միմիայն ճաշակային նիւթեր՝ իւր բոլոր սննդատու նիւթերը աւերելուց նա կը մեռնի. ուստի օրգանիսմի կեանքը պահպանելու համար անհրաժեշտ է այդ երկու տեսակ, այն է սննդատու և ճաշակային նիւթերի՝ անդադար և հարկաւոր չափերով մատակարարումն։ Նշանաւոր է այն երևոյթը, որ միմիայն ճաշակային նիւթերը, եթէ տրւում են շարունակ, դուրեկան զգացողութիւնների փոխարէն՝ հակառակն են պատճառում։ Եթէ որ և է կերակուր, որ սկզբում մեզ շատ համով է թւում,

¹⁾ Արհեստական ֆիստուլաւոր () շներէ ստամոքսի վրայ ինքս անձամբ տեսել եմ խախտաշոյղի լանկարձակի երևալը, երբ քաղցած շան ցոյց են տալիս եղել մսի կտոր։

մենք ուսում ենք մեծ քանակութեամբ կամ շատ յաճախ—նորա առաջ բերած տպաւորիչ զգացողութիւնները բթանում են: Այս է պատճառը, որ ոչ մի մարդ չի կարող երկար ժամանակ կերակրել միևնոյն կերակրով, նա կը զզուի նրանից:

Մենք սիրում ենք ճաշի բազմատեսակ լինելը ոչ թէ ուրիշ սննդատու նիւթեր ձեռք բերելու համար, որոնք շատ կերակուր-ների մէջ նոյնն են և որոնց մասին ես այնքան շատ խօսեցի, այլ միմիայն տեսակ-տեսակ ճաշակալին նիւթերի համար: Եւ չը պէտք է զարմանալ, որ միմիայն կերակուրը մենք ընդունում ենք զանազան ձևերով և կերակրալին բազմատեսակ նիւթերից պատրաստած: Մենք անդադար փոխում ենք կերակուրը և էլի մնում ենք դժգոհ, եթէ նրանք նորից երևում են սեղանի վրա: Քանի անգամ է պատահել ձեզ ընթերցող, արդէն կուշտ կերած պրծած լինելուց չետոյ մաս-նակցել թէկուզ մի քաղցրեղէն խմորեղէնի, կամ մի աւելի թեթիւ կերակուրի: Բացատրու թիւնը էլի նոյնն է. մենք կարող ենք ուսել այնպիսի մի քանակութիւն և այնքան բազմազան նիւթեր—մինչև որ սոքա արդէն զզուելի են դառնում:

V

Վերը մենք խօսեցինք սննդատու նիւթերի նշանակութեան մասին. այժմ խօսենք թէ ինչ չափերով պէտք է լինեն այդ սննդատու նիւթերը կերակուրի մէջ—նպատակաչարմար սննդաութեան համար ջոկ ջոկ պայմաններում:

Սննդատու նիւթերի չափերի մասին խօսելիս ես առաջիմ աչքի առաջ կուեննամ՝ սպիտակուցալին նիւթերը, ճարպերը և ածխաջրածինները, իսկ ջրի մասին կը խօսեմ չետոյ: Բայց որովհետև անօրգանական մասերը գտնուում բոլոր նիւթերի մէջ անհրաժեշտ չափսերով, ուստի դոցա մասին առանձնապէս խօսելու հարկ չկար:

Գրեթէ անհնարին է օրգանիսմի սննդաութեան համար կազմել մի ընդհանուր անպայման նորմ ¹⁾ սննդատու նիւթերի, որովհետև այդ չափը կախած է զանազան պայմաններից, այն է՝ հա-

¹⁾ Նորմ=չափ

ասկից, սեռից, կլիմայից, օրգանիսմի դրութիւնից (հանգստութիւն կամ Ֆիզիկական մտաւոր աշխատութիւն) և անհատականութիւնից:

Ուստի իմ բերելիք թւերը ¹⁾ կը լինեն միջին թւեր միջին օրգանիսմի համար որոշ հանգամանքներում:

Ֆօյտը՝ իւր և ուրիշների հետազօտութիւններից առաջ է բերում միջին մարդու համար միջին բանելու ժամանակ հետևեալ թւերը՝

$$118 \text{ գրամ} - \text{սպիտակուցային նիւթեր} \left\{ \begin{array}{l} = 18,3 \text{ գրամ ազոտ} + 63 \text{ գր.} \\ \text{ածխածին} \end{array} \right.$$

$$\begin{array}{l} 56 \text{ ,, } \text{ճարպեր} \\ 500 \text{ ,, } \text{ածխաջրածիններ} \end{array} \left\{ \begin{array}{l} \\ \\ \end{array} \right. = 265 \text{ գրամ ածխածին}$$

$$18,3 \text{ գրամ ազոտ} + 323 \text{ գրամ ածխածին}$$

Այս չափսը կազմուած է այնպիսի կերակուրից, որը բաղկացած է լինում մի խառնուրդից՝ մսեղէն և բուսական մի քանի նիւթերից: Որպէս զի հեշտացնենք այն հաշիւը թէ որքան կերակրային միջոցներ են հարկաւոր օրգանիսմին անհրաժեշտ չափով սննդատու նիւթեր մատակարարելու՝ առաջ դնենք մի աղիւսակ ²⁾, որից կ'երևան մի քանի նիւթերի (ջրի, սպիտակուցային նիւթերի, ճարպերի և ածխաջրածինների) տոկոսական չափերը:

(նայէք յաջորդ երեսը):

¹⁾ Սննդատու նիւթերի չափսերը որոշելու համար աշխատել են՝ Bischoff, Voit, Pettenkofer, Pflüger, Rohland, Beneke, Rubner Banke և ուրիշները:

²⁾ König—Chemische Zusammensetzung der menschlichen, Nahrungs- und Genussmittel.

Կերակրային միջոցներ	Ձրե $\%$	Սպիտակուց $\%$	Ճարպերի $\%$	Ածխաջրածիներ $\%$
Հում մաքուր միս . . .	75.9	21.9	0.9	—
Եփած » . . .	56.86	34.14	7.5	0.4
Ցապակած » . . .	55.39	34.23	8.21	0.72
Գեր հորթի » . . .	72.31	18.88	7.41	0.07
Նիհար հորթի » . . .	78.82	19.86	0.82	0.50
Միջակ ոչխարի » . . .	75.99	17.11	5.77	0.00
Նապաստակի » . . .	74.16	23.34	1.13	0.19
Հաւի » . . .	70.82	22.65	3.11	1.09
Կռնկոյ ձկան միս (ЩУКА)	79.59	18.34	0.51	0.63
Հաւի ձու	73.67	12.55	12.11	0.55
Զւի սպիտակուցը . . .	85.75	12.67	0.25	0.00
Զւի դեղնուց	50.82	16.24	31.75	0.12
Կանանց կաթը	87.02	2.36	3.94	6.23
Կովի »	87.42	3.41	3.65	4.81
Այծի »	87.33	3.52	3.94	4.39
Սեր	65.51	3.61	26.75	3.52
Կովի իւզ	14.49	0.71	83.27	0.58
Իւզալի պանիր	39.09	25.09	29.05	2.22
Յորենի հատիկը	13.65	12.35	1.75	67.91
Յորենի ալիւր	13.34	10.18	0.94	75.06
Հաճարի հատիկը	15.06	11.52	1.79	69.82
» ալիւր	13.71	11.52	2.08	71.25
Վարսակի »	14.83	10.89	1.48	72.22
Եգիպտացորենի ալիւր	13.12	9.85	4.62	70.90
Բրինձ	13.11	7.85	0.88	77.15
Մակարոնը	13.07	9.02	0.30	76.77
Սպիտակ հացը	35.59	7.06	0.46	56.90
Գետնախնձորը	75.48	1.95	0.15	21.44
Փարունք	95.60	1.02	0.09	2.90
Լորի չորացրած	14.76	24.27	1.61	56.10
Սիսեռ	14.99	22.85	1.79	57.79

Եթէ մարդս յանձն առնէր այս բոլոր կերակրային միջոցներից միայն որ և է մէկը ուտելով կերակրւել—վերոյիշեալ նորմալ անհրաժեշտ սպետակուցային աննդատու նիւթերի այն 118 դրամը (=18.3 գր. ազոտ) ստանալու համար պէտք է ուտէր ֆոյտի հաշւով հետեւեալ միջոցներից.

կամ՝	պանիր . . .	68	մսխալ
»	սիսեռ.	1 Ֆ. 34	»
»	նիհար միս. . .	1 » 38	»
»	ցորենի ալիւր. .	2 » 07	»
»	ձու (18 հատ). .	2 » 32	»
»	եգիպտացորեն. .	2 » 55	»
»	սև հաց.	3 » 64	»
»	բրինձ.	4 » 83	»
»	կաթ	7 » 54	»
»	գետնախնձոր . .	11 » 88	»
»	ճրագու իւղ. . .	12 » 47	»
»	կաղամբ.	19 » 82	»
»	զարեջուր	44 » 26	»

Նորմալ աննդատու նիւթերի մնացած մասը, այն է 328 գր. ածխածին ստանալու համար մարդս պէտք է ուտի (այն չիշեալ ենթադրութեամբ), որպէս զի սոցանով գոհացում տայ ածխաջրածինների և ճարպերի պահանջին.

կամ՝	ճրագու իւղ . . .	1 Ֆ. 16	մսխալ
»	կարակ իւղ. . . .	2 » 08	»
»	ցորենի ալիւր. . .	2 » 15	»
»	բրինձ.	2 » 32	»
»	սիսեռ.	2 » 38	»
»	պանիր	3 » 02	»
»	սև հաց.	3 » 50	»
»	ձու (34 հատ). . .	5 » 78	»
»	նիհար միս. . . .	6 » 79	»
»	գետնախնձոր . . .	8 » 13	»
»	կաթ	12 » 11	»

» կաղամբ . . . 24 » 25 »
 » դարեջուր . . . 34 » 26 »

Աղիւսակի այս թւերը իրանք իրանք խօսում են: Նոքա պարզ ցոյց են տալիս, որ չիշեալ կերակրային միջոցներից և ոչ մէկը՝ ինքն ըստ ինքեան, առանձնապէս վերցրած՝ չի կարող նորմալ (այսինքն բնական, սովորական) կերակուրի տեղը տալ, այնպէս որ անհնարին է մարդու համար դոցանից որ և է մէկով բաւականանալ: Վերցնենք միւր: Սպիտակուցային նիւթերի անհրաժեշտ քանակութիւնը ձեռք բերելու համար պէտք է, չիշեալ աղիւսակների համաձայն, ուտել 1 ֆ. 36 մսխալ միս ձարպային և ածխաջրածնային նիւթերը ձեռք բերելու համար անհրաժեշտ է 6 ֆ. 36 մ. միս ուտել: Ակներև է որ ոչ ոք չի կարող երկար ժամանակ ուտել օրական 6 ֆ. 79 մսխալ միս ¹⁾: Սա մէկ: Նրկորդ օր 6 ֆ. 79 մսխալ միս ուտելիս—մենք օրդանիսմի մէջ ներս բերած կը լինէինք սպիտակուցային նիւթերի մի ահագին քանակութիւն, որ աւելորդ էր օրդանիսմի համար (որովհետև սպիտակուցային նիւթերի քանակութիւնը պէտք է լինէր այնքան՝ որքան որ կայ 1 ֆ. 36 մսխալ մսի մէջ) և որ սոցա մարսողութիւնը շատ կը դժւարացնէր ստամոքսի գործը: Պարզ է ուրեմն, որ պէտք էր մսին, որը հարուստ է սպիտակուցային նիւթերով, աւելացնել այնպիսի կերակրային միջոցներ, որոնք հարուստ լինէին ձարպերով և ածխաջրածիններով (օրինակ՝ ձարպ կամ դետնախնձոր), որ կերակրային միջոցների աւելի պակաս կշռով և ծաւալով (ОБЪЕМЪ) ստանալ կարողանայինք սննդատու նիւթերի նորմալ չափը: Էսկիմոսները գործ են ածում ոչ միայն մկանային միս որը աղքատ է ձարպերով և ածխաջրածիններով, այլ և աւելացնում են դրա վրա բաւականաչափ ձարպ: Հիւսիսային Ամերիկայի հնդիկները որսի գնալիս վերցնում են իրանց հետ միակ կերակուր պեմմեկան ասածը, որ բաղկացած է փոշիացած մսից և ձարպից: Հնդկաստանից և Չինացիք թէև գործ են ածում մեծ քանակութեամբ բրինձ (որը շատ աղքատ է սպիտակուցային նիւթերով, բայց հարուստ ածխաջրածիններ:

¹⁾ Հարկաւոր չէ 1 ֆ. 36 և 6 ֆ. 36. գումարել, որովհետև վերջին գումարի մէջ արդէն կալ բաւականաչափ և սպիտակուցային նիւթ:

րով) աւելացնում են դրա վրա— ձուկ, լուբիա, սիսեռ (որոնք հարուստ են սպիտակուցային նիւթերով): Իրլանդացիք և արևելեան Պրուսիայի բնակիչները գետնախնձորի վրա (որը հարուստ է ածխաջրածիններով և աղքատ սպիտակուցային նիւթերով) աւելացնում են մածուն կամ մեր տառեխի նման մի ձուկ (с.е.лѣдкѣ), որոնք հարուստ են սպիտակուցային նիւթերով: Աւարալիայի խորքերի մի քանի բնակիչները գործածելով վայրենի թռչնեղէն միս ահագին քանակութեամբ՝ այնուամենայնիւ մեռնում էին մաշածութիւնից — երևի ճարպային և ածխաջրածնային նիւթերի պակաս ընդունելու պատճառով: Բոլոր ասածներիցս պարզում է, թէ ի՞նչու համար մարդս գրեթէ միշտ բնազդմամբ ընտրում է իւր համար կերակուրների զանազան տեսակները կենդանային և բուսական աշխարհներից, և չիրաւի միմիայն այս պայմանով նա կը ստանայ ռացիոնալ կերակուրը, որը ոչ շատ կը ծանրաբեռնի նրա ստամոքսը, ոչ էլ աւելորդ ոյժերի վատնումն կը պատճառէ: Ջրի անհրաժեշտ քանակութիւնը, որը պիտի ծառայի օրգանիսմի նիւթական կազմութեան, տարբերում է անհատի օրգանիսմի անհատականութիւնից, հանգստութիւնից թէ բանելուց, հասակից, տարւայ եղանակից և այլ արտաքին պայմաններից:

Forster'ի 1) հետազոտութիւնների հիման վրա — հասակառած մարդը սովորական սննդաութեան միջոցին ընդունում է իւր մէջ 5 Ֆ. 70 մսխալից սկսած մինչև 9 Ֆ. 11 մսխալ ջուր: Ջրի այս քանակութիւնը ներս է ընդունում երկու կերպ՝ 1) կերակուրի ձևով, որը որոշ ջրի քանակութիւն է պարունակում (տես կերակրային միջոցների բաղադրիչ մասերի աղիւսակը), և 2) ընկելիքի ձևով:

VI

Մինչև հիմա մենք որոշում էինք միջին աշխատաւորի համար միջին աշխատութեան ժամանակ կերակուրի միջին նորմալ չափը: Ինձ մնում է մի քանի խօսք ասել այն պատճառների մասին, որոնք փոփոխութեան են ենթարկում այդ չափը՝ նայած օրգանիսմի վրա նոցա ունեցած ազդեցութեան. զորօրինակ օրգանիսմի

1) Эрисманъ—Курсъ Гигіены т. III.

տեսակ տեսակ դրութիւնները (հանգստութիւն, մտաւոր կամ ֆիզիկական աշխատութիւն, չղութիւն, կաթի արտադրութիւն) օրգանիսմի սեռը և նրա հասակը:

Այս բոլոր դրութիւնների մասին փորձնականապէս ձեռք բերւած նորմալ թւերը ամէն մէկի համար առանձին—ես այստեղ հարկ չեմ տեսնում մէջ բերելու, այլ կը խօսեմ կարճաօտ կերպով:

Ահներև է որ բանող մշակը աւելի շատ սննդատու նիւթեր պիտի ընդունի՝ աչքի առաջ ունենալով աւելի շատ մեքանիկական գործողութիւն:

Իսկ զոր սննդատու նիւթերից—բորակածնայինից թէ անբորակածնայինից:

Այս հարցը հետազոտողների մեծամասնութիւնը պարազուլիս ունենալով պ. Ֆոյտին՝ ասում է որ բանող մարդը սպառում է սպիտակուցային նիւթերի մի և նոյն քանակութիւնը թէ հանգստութեան և թէ սաստիկ աշխատութեան դէպքերում. որ միմիայն անբորակածնային նիւթերի սպառման քանակութեան մէջ է զանազանութիւնը, այսինքն իբր թէ բանելու (работа) ժամանակ օրգանիսմը սպառում է աւելի շատ անբորակածնային նիւթեր (ճարպեր և ածխաջրածիններ) քան հանդիստ եղած ժամանակ. որովհետև ճարպերը և ածխաջրածինները իրանց այրելու միջոցին օրգանիսմի մէջ—ծառայում են իբրև դլխաւոր աղբիւր՝ ծածկւած ոչ թ և տաքութեան պատրաստելու համար:

Հետազոտողների փոքր մասը, որոնց թւում եմ և ես, ասում է որ բանելու ժամանակ բացի ճարպերից և ածխաջրածիններից սպառւում է նաև սպիտակուցային նիւթերի մի փոքր քանակութիւն: Ուստի մշակի կերակրի մէջ բացի ճարպերի և ածխաջրածինների աւելացնելուց՝ պէտք է աւելացնել նաև սպիտակուցային նիւթեր մի փոքր քանակութեամբ:

Վերջապէս Շպէկը ապացուցեց որ մտաւոր աշխատութիւնը չի շատացնում աւերման պրոցեսները օրգանիսմի մէջ, ուստի և տեղիք չկայ ենթադրելու որ մտաւոր մշակը սպառէր աւելի շատ կերակրային միջոցներ:

Անցնելով կնոջ չղութեան շրջանին՝ պէտք է ասենք, որ թէ երկխաչի զարգացման և թէ կաթի զոյացման համար անհրաժեշտ

են աւելորդ նիւթեր: Ակներև է որ այդ երկու դրութիւնների համար էլ նիւթը պիտի ներս բերւի կերակուրի հետ. ուստի թէ յղի կնոջ և թէ կա՞ծ տուղ կնոջ կերակուրի մէջ պէտք է շատացնել սննդատու բոլոր նիւթերը: Եւ գլխաւորապէս սպիտակուցային նիւթերը, որովհետև սրանք են կազմում այն նիւթերը, որոնցից թէ զարգանում է երեխան և թէ գոյանում է կաթը:

Գալով ուեւին՝ պէտք է ասենք որ կինարմատը աւելի քիչ կերակուր է պահանջում. առաջին՝ որ նրա մարմնի սովորական քաշը տղամարդու քաշից աւելի պակաս է (չմոռանանք չիշել որ հասակ առածները իրանց քաշի համեմատ են կերակուր ընդունում), և երրորդ՝ կինարմատը այնքան ինտենսիւ ¹⁾ չի զործում, բանում:

Հասակի մասին արդէն մանրամասն խօսած լինելով (գլ. I)՝ այստեղ կը չիշեմ միայն, որ աճող օրգանիսմի կերակուրը ծառայում է աւելի շատ նպատակների քան հասակ առածինը, և հասակ առածինը իւր կողմից օրգանիսմի համար աւելի շատ նպատակների է ծառայում քան ծերերինը. ուստի աճող օրգանիսմը ակնյայտ կերպով աւելի շատ կերակուր պիտի ընդունի քան հասակ առածը, իսկ վերջինը իր կողմից աւելի շատ կերակուր պիտի ընդունի քան ծերը: Այս տեսական եզրակացութիւնը ապացուցւած է գիտնականների բազմաթիւ փորձերով:

Երեխայի ծննդեան բոպէից մինչև 10—12 տարեկան հասակի սննդառութեան մանրամասնութիւնները՝ ես կը դարձնեմ նիւթ մի առանձին յօդւածի:

¹⁾ ինտենսիւ = սատուիկ, ուժգին: